ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դամկար ՍՊԸ-ն ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Զգեստահարանը 5 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պատրաստված կլինի 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ Ե0դասից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Հետնապատը կլինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն լամինացված ՓՏՍ Ե0դասի գույնի: Աշխատանքային հարթության եզրերը լավ հղկված ու մշակված կլինեն, առանց ծլեպների, առջևի կլորացված հատուկ դետալներ: Զգեստապահարանի արտաքին չափսերն են՝ 1708 x 300 x 1644 մմ (L x Խ x Բ), յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են՝ 320 x 300 x 1300 մմ (L x Խ x Բ) մմ: Բոլոր 5 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ նախատեսված կլինի՝ վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի՝ 320 x 300 x 200 մմ (L x Խ x Բ) տեղեր (բաց դարակներ): Բոլոր սեկցիաներում գլխարկների դարակի տակից ամրացված կլինի մետաղական բարձրորակ երկտեղանի կախիչ: Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Այն կունենա չորս առանձին մետաղական 300 մմ բարձրությամբ ոտքեր, որոնք տեղադրվում են եզրերից 50 մմ դեպի ներս: Ոտքերի հատակին հպվող հատվածի եզրերի տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ 8 մմ է: Կլինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը կպարտավորվի սեղմ ժամկետներում կկատարվի համապատասխան ամրացում:

	Կլինեն էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը կկատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների և ծշեպների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, կլինի հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Գույնը նախապես կհամաձայնեցվի մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի համարժեք փաստաթուղթ : Կսահմանվի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման նպատակով: Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի ռուսերեն, ընթեռնելի տարբերակով: Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Дамкар ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	